Բաբկեն Հ. Հարությունյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆ ԸՍՏ «ՁՕՐԱՆԱՄԱԿԻ»

Նվիրվում է ՀՀ զինված ուժերի ստեղծման 20-ամյակին*

Մուտք

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը հանդիսացել է Առաջավոր Ասիայի երրորդ հզոր պետությունը՝ Հռոմեական կայսրությունից ու Սասանյան Պարսկաստանից հետո: Անշուշտ, Հայոց թագավորությունը ռազմական առումով զիջում էր վերջիններիս, սակայն երկու հզոր տերությունների մրցապայքարի հաջողությունը մեծապես կախված էր այն հանգամանքից, թե դրանցից որի հետ կդաշնակցի Մեծ Հայքը:

Արշակունյաց թագավորության գոյության սկզբնական շրջանում՝ I-III դդ., Մեծ Հայքի զինված ուժերը կրել են ստրկատիրական պետությանը հատուկ գծեր՝ վաղ ավատատիրության որոշ երանգներով: IV դարի սկզբներից թագավորությունը թևակոխում է վաղ ավատատիրության դարաշրջան, և նրա զինված ուժերը ձեռք են բերում ավատատիրական պետությանը բնորոշ առանձնահատկություններ:

*Բազմաթիվ գիտական ճշգրտումներ պարունակող այս ուսումնասիրությունը ավելի ընդարձակ ծավալով ու գունավոր ներդիրներով հրապարակվելու է «Հայ ռազմարվեստի պատկերազարդ պատմություն» մատենաշարի 5-րդ պրակում: Խմբ.: Ընդունվել է տպագրության 25.01.2012:

Հարկ է խոստովանել, որ Մեծ Հայքում, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, ավատատիրության զարգացումը կատարվեց էվոլյուցիոն ճանապարհով, ինչի հետևանքով նրա զինված ուժերը, ըստ մեծի մասին, պահպանեցին հնից եկող կազմակերպական ավանդույթները:

Մեծ Հայքի թագավորության բանակը Արշակունյաց շրջանում կազմել է 120 հազար մարդ: Մեզ է հասել մի շատ արժեքավոր փաստաթուղթ, որն ուսումնասիրողների կողմից պայմանականորեն ստացել է «Զօրանամակ» անվանումը: Ն. Ադոնցը, հենվելով Ստեփաննոս Օրբելյանի մի հաղորդման վրա՝ «Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն Հայոց զոր Ղևոնդ գրեաց»[1], գտնում է, որ ուսումնասիրողների կողմից «Զօրանամակ» կոչված փաստաթուղթը իրականում նույնպես կոչվել է «Գահնամակ»[2]:

1. Մեծ Հայքի թագավորության բանակի կառուցվածքը

Բանակը կազմված էր արքունական զորագնդերից և նախարարական զորաջոկատներից: Դատելով Պատմահոր մի վկայությունից՝ «Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարևելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ. և զարևմտեանն տայ Տիրանայ. զհարաւայինն ի Սմբատ հաւատայ և զհիւսիսայինն ի Զարեհ»[3], կարելի է ենթադրել, որ արքունական զորքը բաժանված է եղել չորս մասի: Մովսես Խորենացու մեկ այլ հաղորդման համաձայն. «(Վաղարշակը) Եւ գունդս և պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս»[4]: Հայոց Վաղարշակ թագավորը, որի անձը և ապրած տարիները հատուկ քննության կարիք ունեն, մեր կարծիքով, Արտաշես Ա-ից հետո հստակ սահմանել է արքունի չորս զորաբանակներից յուրաքանչյուրի թվաքանակը՝ մեկ բիւր, որով արքունի բանակը կազմել է չորս բիւր կամ քառասուն հազար զինվոր:

Սույն տեղեկությունները հակասության մեջ են «Զօրանամակ»-ի տվյալների հետ, քանի որ վերջինս նախարարական զորաջոկատների ընդհանուր թիվը համարում է ութսունչորս հազար, այլ խոսքով՝ ստացվում է, որ արքունական զորագնդի զինվորների թիվը կազմել է երեսունվեց հազար: Այս հանգամանքը շփոթության մեջ է գցել անգամ այնպիսի մեծանուն հայագետի, ինչպիսին Ղ. Ալիշանն է, որի կարծիքով՝ հայկական բանակի մարտիկների թիվը կազմել է 124 000[5]:

Հայկական արքունի ուժերն իրենց մեջ էին ներառում նաև արքունի Մաղխազական թիկնապահ գունդը և Ռմբոսեան կամ Մարդպետական գունդը, որոնց, սակայն, կանդրադառնանք «Զօրանամակ»-ում նախարարական զորաջոկատների խնդիրը քննելուց հետո:

---

1 **Ստեփաննոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 25:

2 **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 250:

3 **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մ. Աբեղան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. ԾԳ:

4 **Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ. է:

5 Տե՛ս **Ղ. Ալիշան,** Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 422:

Մեզ հասած «Զօրանամակ»-ի տեքստն ունի ներքոհիշյալ պատկերը.

«Արեւմտեան դուռն

	Անգեղ տուն	ՁՆ [3400]
	Բդեշխն Աղձնեաց	Տ [4000]
	Բրզնունական	Վ [3000]
	Մանաւազեան	Ռ[6] [1000]
5	Բագարատունի	ՌԾ [1500]
	Խորխորունի	Ռ [1000]
	Ծոտացի	Ռ [1000]
	Վահունի	Ռ [1000]
	Ապահունի	Ռ [1000]
10	Գնունի	Ծ [500]
	Բասենացի	Ո [600]
	Պալունի	Յ [300]
	Ընծաքին	Տ [4000]
	Մանդակունի	Յ [300]
15	Սաղկունի	Յ [300]
	Վարաժնունի	Յ [300]
	Այծենական	Ճ [100]
	Առուենեան	Յ [300]
	Վարժնունեան	Ճ [100]
20	Սպան[դ]ունի	Յ [300]
21	Ռափսեան	Ճ [100]

Արեւելեան դուռն

	Սիւնի	ԱՔՆ [19400]
	Ամասկոնի	Մ [200]
	Աւածացին	Մ [200]
	Վարձաւունի	Մ [200]
5	Տամրարացի	Ճ [100]
	Մազազացի	Ճ [100]
	Ցողկեպան	Ճ [100]
	Գրզճունի	Ծ [50]
	Վառնունի	Ծ [50]
10	Բաքան	Ծ [50]
	Կճրունին	Ծ [50]
	Գուկանն	Ծ [50]
	Պատսպարունին	Ծ [50]
	Գազրիկան	Ծ [50]
15	Վիժանունի	Ծ [50]
	Զանդաղան	Ծ [50]
	Սոդացի	Ծ [50]
	Աքածացի	Ծ [50]
	Ասճշնեան	Ծ [50]
20	Կինան	Ծ [50]
21	Տագրեան	Ծ [50]

Հիւսիսային դուռն

	Բդեշխն Գուգարաց	ՏԾ [4500]
	Կամսարական	Ո [600]
	Կասպեացի	Վ [3000]
	Ուտէացի	Ռ [1000]
5	Ծաւդէացի	Ռ [1000]
	Տայեցի	Ո [600]
	Մամիկոնեան	Ռ [1000]
	Վանանդացին	Ռ [1000]
	Գարդմանացին	Ռ [1000]
10	Որդունի	Չ [700]
	Առուեղեանքն	Ծ [500]
	Աշոցեան	Ծ [500]
	Դիմաքսեան	Յ [300]
	Գընթունի	Յ [300]

Հարաւային դուռն

	Կաղմէացի	ԱՎՄ[13200]
	Կորդուացի	Ռ [1000]
	Արծրունի	Ռ [1000]
	Ռընչտունի	Ռ [1000]
5	Մոկացի	Ռ [1000]
	Գողթնեացի	Ծ [500]
	Անձեւացի	Ծ [500]
	Հաբուժեան	Ճ [100]
	Տրպատունի	Ճ [100]
10	Մեհնունի	Ճ [100]
	Ակէացի	Յ [300]
	Զարեհուանեայ	Յ [300]
	Եր[ու]անքունի	Յ [300]
	Համաստունեան	Ճ [100]

6 Յ. Շահխաթունյանցի հրատարակության մեջ Բագրատունիների զինուժը ցույց է տրված 1 500: Տե՛ս **Յ. Շահխաթունյանց,** Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. 2, էջմիածին, 1842, էջ 58-59:

15	Արտաշեսեան	Յ	[300]	22	Վարազարտիկեան	Ճ	[100]
15	Բոխայեցի	Յ	[300]		Սագրատունի	Ճ	[100]
	Գաբեղեան	Յ	[300]		Աբրահամեան	Ճ	[100]
	Աբեղեան	Յ	[300]		Տրունի	Յ	[300]
	Հաւնունի	Յ	[300]		Բուժունի	Մ	[200]
	Սահառունի	Յ	[300]	20	Քաջբերունի	Ճ	[100]
20	Ձեւնականան	Յ	[300]		Բոգունի	Ճ	[100]
	Աշխադարեան	Ճ	[100]				
22	Մուրացան	Յ	[300]				

… եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ՁԴ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի՝ որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ ա[ր]քայի եւ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն: Եւ ընդ ամենայնն թիւ զօրացն Հայոց՝ որ է հարիւր եւ քսան հազարաց»[7]:

Որ նման փաստաթուղթ գոյություն է ունեցել, կասկածից վեր է, քանի որ դրա մասին հայտնի է եղել Սյունյաց պատմիչ Ստեփաննոս Օրբելյանին, սակայն ստորև քննությունը ցույց կտա, որ մեզ հասած օրինակը, ստեղծվելով հանդերձ հնի հիման վրա, այնուամենայնիվ, գրական փաստաթուղթ է: Ուստի քննությունն ավարտելուց հետո մենք կփորձենք եղած նյութի ընձեռած հնարավորությունների շրջանակում վերականգնել փաստաթղթի նախնական հավանական տեսքը հիմնական գծերով:

Եթե հավատանք պատմիչին, Գրիգոր Լուսավորիչն իբր հրամայում է «…Մեծին Տրդատայ կարգել զթագաւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց (իմա՛ Հռոմի - Բ.Հ.), և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ ու պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ: Որ և գեղեցկապէս յօրինեալ ի ժամ ճաշուն նստել բարձս 400 իշխանաց. որոց գահագլուխք՝ բդեաշխն Գուգարաց և իշխանն Աղձնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի և իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց և իշխանն Մամիկոնէից: Սոքա էին գահագլուխք ամենայն իշխանացն Հայոց: Իսկ զօրացն և աշխարհին չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին: Արևելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք. արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք, հիւսիսային կողմանն՝ բդեաշխն Գուգարացւոց 22 իշխանօք, հարաւային կողմանն՝ իշխանն Անգեղտան 22 իշխանօք»[8]:

Դժվար չէ տեսնել, որ Սյունյաց պատմիչը գիտի «Զօրանամակ»-ի մասին, սակայն իր նախորդ պատմիչներից կցկտուր գիտելիքներ ունենալով բդեշխների մասին, նա նախարարական չորս թևերը հանդիսացող սպարապետներին ներկայացնում է որպես բդեշխներ, ինչը հասկանալի է, բոլորովին էլ ճիշտ չէ: Ստեփաննոս Օրբելյանը սխալվել է նաև, երբ Կորդուաց իշխանին համարում է արևմտյան, իսկ Անգեղտան իշխանին՝ հարավային դռան հրամանատարներ, երբ ըստ «Զօրանամակ»-ի՝ դրանցից առաջինը, ինչպես ստորև կտեսնենք, եղել է հարավային դռան, իսկ երկրորդը՝ արևմտյան դռան հրամանատարը:

Եթե 120 հազարից հանում ենք չորս բյուրից բաղկացած արքունի զորաբա-

7 **Ղ. Ալիշան,** Այրարատ, էջ 424: Հասկանալի է, որ զորաջոկատների քանակությունը «Զորանամակում» տրված է տառերով, իսկ մենք փակագծերի մեջ տվել ենք նաև թվանշաններով (Բ. Հ.):
8 **Ստեփաննոս Օրբելեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 24-25:

նակները, ապա տեսնում ենք, որ մնացյալ քանակությունը չի բավարարում անգամ նախարարական զորաջոկատներին, էլ ուր մնացին արքունի սպասավորները, որոնք հանդես էին գալիս թագավորի հետ, և Մարդպետական գնդին հատկացվելիք մի ինչ-որ քանակը: Կամա թե ակամա կարելի է գալ այն եզրակացության, որ արքունի սպասավորների և Մարդպետական գնդի մարտիկների քանակությունը ինչ-ինչ պատճառներով հայտնվել է նախարարական զորագնդերի ընդհանուր քանակության մեջ:

«Զօրանամակ»-ի մեջ բյուրավոր են միայն Սյունյաց իշխանը և Կաղմեացին, որոնք համապատասխանաբար մարտադաշտ էին դուրս բերում 19 400 և 13 200 մարտիկներ: Սյունիքի զինուժը, ինչպես տեսնում ենք, կազմում է զարհուրելի ուժ այն դեպքում, երբ բնակլիմայական շատ ավելի բարենպաստ պայմաններ ունեցող Աղձնիքի բդեշխությունն ի վիճակի էր մարտադաշտ դուրս բերելու ընդամենը 4 000, իսկ Գուգարաց բդեշխությունը՝ 4 500 զինվոր:

Ուշադրություն է գրավում մի իրողություն ևս. իշխանական զորքը, եթե հավատանք մեզ հասած «Զօրանամակ»-ի տվյալներին, կրկնակի անգամից ավելի գերազանցել է արքունականը, ինչը պետք է արքային խաղալիք դարձներ նախարարների ձեռքին:

«Զօրանամակ»-ի համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ այդ փաստաթուղթը մեզ է հասել խաթարված և այն էլ՝ խիստ խաթարված վիճակում: Սկսենք այն բանից, որ Ընծաքին նախարարությունը, որ ակնհայտորեն նույնական է Ընծայնացվոց իշխանությանը, իբրև թե մարտադաշտ էր դուրս բերում 4 000 զինվոր: Ընծաքին-Ընծայնացվոցի հնարավորությունները լավագույն դեպքում կարող էին կազմել մի քանի հարյուր մարտիկ և հանկարծ՝ 4 000-անոց զորաջոկատ: Խնդիրը, սակայն, հեշտ է լուծվում: Հաշվի առնելով, որ հայ հին մատենագրության մեջ մեծատառ ՍՊ=«Տ» և ՍՊ փոքրատառերը կարող էին շփոթվել վերին հատվածի մեծ կամ փոքր գրելու դեպքում, ուստի դժվար չէ կռահել, որ «ՍՊ»-ն շփոթվել է «ՍՊ»-ի հետ և 200-ը թյուրիմացաբար վերածվել է 4 000-ի: Այս սրբագրությունը, որի ճշտությունը վեր է ամեն կասկածից, իրականում կասկածի տակ է առնում «Զօրանամակ»-ի մեջ հիշատակված նախարարական զորաջոկատների 84 հազար լինելը:

Եթե, ըստ «Զօրանամակ»-ի, արևելյան դուռն ունեցել է 21 000, արևմտյանը՝ 24 100, հյուսիսայինը՝ 18 000 և հարավայինը՝ 21 000 մարտիկ, ապա դրանց գումարը, որքան էլ զարմանալի լինի, կազմում է ոչ թե 84 000, այլ 84 100 մարտիկ, այսինքն՝ 100-ով ավելի մատուցվող քանակությունից: Իսկ եթե դրան գումարենք այն իրողությունը, որ Ընծաքինի 4 000-անոց զորաբանակը վերածվում է 200-ի, ապա մարտիկների քանակն իջնում է 80 300-ի: Բայց չէ՞ որ հիշյալ թվերի մեջ, կամենում ենք թե ոչ, պետք է մտնեն արքունի Մաղխազական թիկնապահ գնդի և Մարդպետական գնդի ուժերը, որոնք, ինչպես ստորև կտեսնենք, կազմել են համապատասխանաբար 10 000 և 15 000 զինվորներ:

Որո՞նք են նման եզրակացության հիմքերը: Հայտնի է, որ 652 թվականի հայարաբական պայմանագրով արաբները պատրաստվում էին իրենց ծախսով պահելու 15 000-անոց հայկական այրուձին, որը չէր տարվելու Ասորիք, սակայն գործելու էր ըստ արաբների պետքի և կարգադրության[9]: Պայմանագրում հանդես

9 Տե՛ս **Սեբէոսի եպիսկոպոսի** Պատմութիւն, բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանոթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Եր., 1939, էջ 140-141:

եկող քանակությունը բոլորովին էլ պատահական չէ, քանի որ փաստաթուղթը կնքելիս այն արտացոլում էր տարածքով և բնակչությամբ խիստ կրճատված Հայկական մարզպանության զինուժը, որն այդ շրջանում գործնականում համապատասխանում էր, չնչին բացառությամբ, Մարդպետական գնդի ռազմուժին: Խնդիրն այն է, որ 571 թվին Սյունիքի վարչական անջատումով՝ Հայկական մարզպանությունից և Հայաստանի 591 թվականի բաժանումով՝ Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև, Հայկական մարզպանությունն ամփոփվել էր Մարդպետական իշխանության և հարևան մի քանի գավառների տարածքում: Սեբեոսի մեկ այլ հաղորդման համաձայն՝ հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանը 482-484 թթ. հակապարսկական ապստամբության ժամանակ 30 000-անոց բանակով ջախջախում է պարսիկներին Գերանա դաշտում[10]: Վահան Մամիկոնյանի ռազմական ուժերն իրականում ներառել են Մարդպետական և Մարզպանական գնդերը, այլ խոսքով՝ պարսից արքունիքը Հայկական մարզպանությունում ստեղծել էր մի կացություն, երբ Մարզպանական գունդը և Մարդպետական ուժերը իրար հավասար էին: Ելնելով այս տեղեկություններից՝ դժվար չէ եզրակացնել, որ, երբ Վասակ Սյունին եղել է հայոց մարզպան, նրա սեփական ուժերին ավելացվել են մարզպանության զինված ուժերը, որի արդյունքում առաջացել է գրեթե անհասկանալի կացություն, թե իբր՝ Սյունյաց նախարարությունը մարտադաշտ է դուրս բերել 19 400 մարտիկ: Բնական է, որ եթե մենք այս քանակությունից հանենք 15 000-ը, ապա կստացվի, որ Սյունյաց նախարարության իրական զինված ուժերը կազմել են ընդամենը 4 400 զինվոր, ինչը միանգամայն համահունչ է նախարարության տարածքին ու բնական հարստություններին համապատասխանող բնակչության թվին:

Վերը մենք փորձեցինք ցույց տալ, որ Մարդպետական գունդը և Մարզպանական գունդը եղել են 15 000-ական: Հետևաբար, չնայած Վասակ Սյունուն կարծես թե վերագրված է եղել մարզպանական զինուժը, իրականում «Զօրանամակ»-ում թաքնված ձևով պահպանվել է Մարդպետական գնդի զորուժը, որը նույնպես 15 000 էր:

Միայն միամիտ ուսումնասիրողը կարող է մտածել, թե հայոց թագավորի թիկնապահ գունդը մաս չի կազմել հայոց բանակին: Այն պարզապես թաքնված է «Զօրանամակ»-ում հիշատակված արքունի սպասավորների անվան ներքո, որոնք պատերազմի էին դուրս գալիս արքայի հետ: Մեզ հայտնի է, որ դեռ Արտաշիսյանների ժամանակից թիկնապահ գունդն իր ինչ-ինչ մասով մասնակցել է թագավորի հետ հայոց բանակի ձեռնարկած արշավանքներին կամ այլ ձեռնարկների: Համաձայն հունահռոմեական հեղինակների՝ հայոց Արտավազդ Բ թագավորը (55-34/33) հռոմեական զորավար Կրասոսի հետ բանակցելու համար նրան է ներկայացել 6 000-անոց զորաջոկատով, ինչը շատ ուսումնասիրողների մտածել է տվել, թե արքունի թիկնապահ գունդը կազմված է եղել ընդամենը 6 000 մարտիկներից: Սակայն նման մոտեցումն ամենևին էլ ճիշտ չէ երկու տեսակետից: **Նախ**, թագավորը չէր կարող չմտածել արքունիքի և թագավորական ընտանիքի պաշտպանության ապահովման մասին, ուստի թիկնապահ գնդի մի նշանակալից մասը պետք է մնար թագավորության մայրաքաղաքում, **երկրորդ**, Աքեմենյաններից սկսած՝ նմանատիպ գնդերը սովորաբար ունենում էին 10 000 մարտիկ: Հավելենք նաև, որ թիկնապահ գնդի մի մասի՝ մայրաքաղաքում թողնելը բացատրվում էր նաև այն իրողությամբ, որ հակառակ պարսից արքունիքի՝ հայոց թագավորները

10 Անդ, էջ 95:

պատերազմի մեկնելիս իրենց կանանց չէին վերցնում իրենց հետ: Ճիշտ է, կարող են առարկել, թե համաձայն «Զօրանամակ»-ի՝ թագուհու պաշտպանությունը հանձնարարված էր Մարդպետական գնդին: Անշուշտ, դա իրողություն է, սակայն միայն արքունիքի, այլ խոսքով՝ պետական ապարատի պաշտպանությունը, որը դրված չէր Մարդպետական ուժերի վրա, պահանջելու էր նշանակալից ուժեր, որոնք կարող էին ապահովվել թիկնապահ գնդի կողմից: Հետևաբար, առավել քան հավանական է ենթադրել, որ հայոց արքունիքի թիկնապահ գունդը գործնականում կազմված է եղել 10 000 մարտիկներից, որոնց քանակությունը ևս թաքնված ձևով պահպանվել է «Զօրանամակ»-ում: Այսպես, ելնելով այն իրողությունից, որ հիշյալ փաստաթղթում Կաղմեացվոց իշխանին վերագրվում է 13 200 մարտիկ, պետք է ենթադրել, որ դրանից 10 000-ն իրականում արքունի թիկնապահ գնդի զինվորներն են: Եթե մեր առաջ քաշած տեսակետը ճիշտ է, իսկ հակառակը հավաստող կռվաններ չկան, ապա ստացվում է, որ Հայոց Արշակունի թագավորները շատ հեռատես ու ճկուն քաղաքագետներ են եղել, քան ուսումնասիրողներին մինչ օրս թվացել է: Եթե հաշվի առնենք, որ արքունի թիկնապահ գունդը, որ հականե հանվանե չի հիշատակվում մեզ հասած «Զօրանամակ»-ում, ներկայացնում էր արքունի սպասավորներին, որոնք պատերազմի էին դուրս գալիս թագավորի հետ, ապա թիկնապահ գնդի զինուժը Կաղմեացիների զորաջոկատում տեսնելը բոլորովին էլ անտրամաբանական չէ: Միաժամանակ պետք է արձանագրել, որ, անտարակույս, արքունական էին Մարդպետական ներքինի իշխանության 15 հազարանոց ուժերը: Հետևաբար, հայոց բանակում արքունական ուժերը ոչ միայն չորս բյուրերն էին՝ դասավորված ըստ երկրի աշխարհագրական չորս կողմերի, այլև միասին 25 հազար մարտիկ կազմող արքունի թիկնապահ և Մարդպետական գնդերը: Արդյունքում, 120 հազարանոց հայկական բանակի կեսից ավելին, ավելի որոշակի՝ 65 հազարը, կազմել են արքունական զորագնդերը, որոնք գերակշռել են նախարարական՝ 55 հազար մարտիկ կազմող զորաջոկատներին:

Ինչպես տեսնում ենք, «Զօրանամակ»-ի տրամաբանությունից բխում է, որ նախարարական զորաջոկատների ընդհանուր թիվը կազմել է 55 հազար, սակայն, երբ 120 հազարից հանում ենք 40 հազարանոց արքունական չորս զորաբանակների զինուժը, ապա ստանում ենք 80 հազար և ոչ թե 84 հազար: Այստեղ մեզ օգնության է գալիս «Զօրանամակ»-ի այն տեղեկությունը, որ 84 հազարի մեջ մտել են նաև այն զորամասերը, որոնք տեղակայված են եղել Մեծ Հայքի գրավյալ երկրներում, այսինքն՝ թագավորության գերիշխանության ներքո գտնվող Վրաց և այսպես կոչված Աղվանից թագավորություններում: Հստակ ստացվում է, որ ռազմակալող ուժերը կազմել են 4 000 զինվոր, սակայն դրանք ոչ թե մաս էին կազմում նախարարական զորաջոկատների, այլ արքունական, հավանաբար, հյուսիսային և արևելյան դռների զորաբանակների: Ամենայն հավանականությամբ հյուսիսային դռան 2000 մարտիկներ ռազմակալել են Վիրքը, իսկ արևելյան դռան 2000 մարտիկներ՝ այսպես կոչված Աղվանքը, չնայած չեն բացառվում նաև այլ համամասնություններ:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ մեզ հասած «Զօրանամակ»-ի՝ նախարարական զինաջոկատների քանակությունը կազմել է 84 հազար, սակայն իրական հաշվարկը այն ցույց է տալիս 84 100, որից, երբ հանում ենք Ընծաքինին սխալմամբ վերագրված 3 800 և Մաղխազական ու Մարդպետական գնդերի 25 հազար մար-

տիկների թիվը, ստանում ենք 55 300, ինչը անհարիր է մեր հաշվարկներին: Հետևաբար, պիտի ենթադրել, որ նախարարություններից մեկին ավելի զինվոր է վերագրված, քան իրականում եղել է: Ն. Ադոնցը «Զօրանամակ»-ի իր հրատարակած տեքստում Բագրատունիներին վերագրում է ոչ թե 1 500, այլ 1 000 մարտիկ, այնպես որ նախարարական զորաջոկատների ընդհանուր ռազմուժը դրա հետևանքով 55 300-ից իջնում է 54 800-ի, որը, սակայն, նույնպես չի կարող ճիշտ լինել, քանի որ բոլոր հաշվարկները ցույց են տալիս, որ նախարարական զորաջոկատների ընդհանուր թվաքանակը կազմել է 55 հազար: Հասկանալի է, որ 200-ի չափ պակասը պետք է վերաբերի մի որևէ իշխանության: Մեր կարծիքով, այդ նախարարությունը աներկբայորեն կարող էր լինել Ամատունիների իշխանական ընտանիքը, որի անունը, կարծես թե, չի հանդիպում «Զօրանամակ»-ի տեքստում: Մեծանուն Ն. Ադոնցը հակված էր կարծելու, որ Ամատունիների իշխանության անվան տակ թերևս թաքնված են Ամասկոնին կամ Համաստունյանը, սակայն անմիջապես ավելացնում է, որ առաջինի ընդամենը 200 մարտիկ ներկայացնող և երկրորդի 100 մարտիկ հաշվվող զինուժը չի համապատասխանում Ամատունիների հռչակին և անվանը[11]: Մեր կարծիքով, Ամասկոնին ընդամենը աղավաղումն է Ամատունիի, որին կարող ենք հատկացնել 200 մարտիկի չափ տարբերությունը: Կստացվի 400 մարտիկ, որը, սակայն, նույնպես չի կարող համապատասխանել Ամատունիների իրական ռազմուժին: Մնում է եզրակացնել, որ Ամատունիների ռազմուժի մի ինչ-որ հատվածը թյուրիմացաբար տեղ է գտել մեկ այլ նախարարության զորաջոկատում: Նման իշխանություն կարող էր հաղիսանալ թերևս Վահունիների նախարարական տունը, որի ռազմուժը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո կարող էր պակասել: Ըստ «Զօրանամակ»-ի՝ Վահունիները մարտադաշտ էին դուրս բերում 1000 մարտիկ կամ Ռ թվով զինվոր: Հայերենի Ռ տառը կարող էր հեշտությամբ շփոթվել Ո-ի հետ, բավական է, որ վերջինիս վրա ինչ-ինչ պատճառներով հայտնվի Ռ-ի ելուստը, այսինքն՝ եթե Վահունիները քրիստոնեության ընդունումից առաջ մարտադաշտ էին դուրս բերել Ռ կամ 1000 զինվոր, ապա դրանից հետո նրանց ռազմուժն իջել է Ո-ի կամ 600-ի: Տարբերությունը կազմել է 400 մարտիկ, որը և պետք է ավելացնել Ամատունիների զորաջոկատին, որը դրանով հասնում է 800 մարտիկի:

Ավելորդ է ասել, որ նաև Բագրատունիների զորաջոկատի քանակությունը 500-ով և Հավնունիներինը 400-ով պակասեցնելը ընդամենը ենթադրություն է, սակայն բավականին մեծ հավանականություն ունեցող ենթադրություն: Ոչինչ չի հավաստում այն մասին, որ Բագրատունիների զինուժը կարող էր ավելին լինել Մամիկոնյանների, Ռշտունիների կամ Մոկացիների համեմատությամբ: Թեկուզև նրանք թագակիր և թագակապ ասպետներ էին, բայց Մամիկոնյաններն էլ սպարապետներ էին: Հետևաբար Բագրատունիների ռազմուժը հազիվ թե տարբերվեր հիշյալ նախարարություններից կամ Ծոփացիներից, Մանավազյաններից ու Խորխոռունիներից: Նույնքան հավանական է Հավնունիների զինուժը 1000-ից 600-ի իջեցնելը: Թեկուզև Վահունիները քրիստոնեության ընդունումից հետո պահպանվեցին որպես աշխարհիկ իշխանություն, սակայն առավել քան հավանական է, որ նախկին քրմական ընտանիքի տիրույթների մի մասը ավելացվել էր հայոց կաթողիկոսի տարոնյան կալվածքին, իսկ Վահունիների զինուժն էլ կրճատվել էր համապատասխան չափով:

11 Տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб 1908, с. 266.

2.Սպարապետությունը և նրա կառուցվածքը

Սյունյաց պատմիչը զինվորական հրամանատարների մեջ առանձնացնում է մի քանի իշխանական տներ՝ Գուգարաց բդեշխին և Աղձնյաց բդեշխին, որին պաշտոնապես իշխան է անվանում, Արծրունյաց, Կորդվաց իշխաններին, Բագրատունյաց ասպետին, Անգեղտան, Սյունյաց և Մամիկոնեից իշխաններին[12]: Առաջինը և երկրորդը չորս բդեշխներից են, որոնց մասին Ագաթանգեղոսը գրել է. «Եւ ի զինուորական կոչմանէն՝ չորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին»[13]: Կորդվացին, որը, եթե չի նույնանում Կադմեացիին, ապա չորս սպարապետներից մեկն է, Անգեղտան և Սյունյաց իշխանները նույնպես պատկանում են չորս սպարապետների թվին, Գուգարաց բդեշխը միաժամանակ չորրորդ սպարապետն է, Մամիկոնյաններն ամբողջ Հայոց բանակի սպարապետներն են, իսկ Արծրունիների և Բագրատունիների դերը այս համակարգում չի հասկացվում: Այդ խնդրում մեր ենթադրությունները, որոնց ստորև կանդրադառնանք, լոկ կրում են հավանականությունների բնույթ:

Ինչպես տեսնում ենք, Ստեփաննոս Օրբելյանի հաղորդումները մի կողմից կարծես թե ընդգրկուն են, սակայն մյուս կողմից ավելի շատ հարցեր են ծնում, քան պատասխաններ տալիս:

Ակադ. Ս. Երեմյանի կարծիքով՝ հայոց բանակի գլխավոր հրամանատարը սկզբում եղել է հազարապետը, և սպարապետության գործակալությունը հանդես է եկել II դարի վերջերից՝ կապված Արևելքում և մասնավորապես Կովկասյան տարածաշրջանում Հռոմի նոր քաղաքականության հետ[14]: Թերևս այս տեսակետի օգտին է խոսում հիշյալ պաշտոնյայի կամ գործակալի հազարապետ անվանումը, որն, անկասկած, սկզբնապես առաջին հերթին պետք է զինվորական պաշտոն լիներ: Սակայն երկրի օրավուր հզորացող տնտեսությունը պահանջում էր, որ հազարապետը առավելապես զբաղվի տնտեսության կազմակերպման հարցերով, ինչը և խթան հանդիսացավ, որ ռազմական գործառույթները հանձնվեն սպարապետի կողմից ղեկավարվող գործակալությանը: Սպարապետը հանդիսանում էր զորքի փաստական հրամանատարը, սակայն Մեծ Հայքի թագավորության բանակի գլխավոր հրամանատարը համարվում էր թագավորը:

Շարունակելով զարգացնել իր միտքը՝ Ս. Երեմյանը ենթադրում է, որ սպարապետությունը հանդես է եկել Վաղարշ Բ-ի (186-198, պետք է լինի՝ 191-211-Բ.Հ.) օրոք, երբ Հայ Արշակունիների հարստությունը դարձավ ժառանգական: Հիշյալ իրադարձությունը տեղի ունեցավ հռոմեական Սեպտիմոս Սևերոս (193-211) կայսեր իշխանության շրջանում, երբ Մեծ Հայքի թագավորության ռազմական կազմակերպությունը արմատական փոփոխության ենթարկվեց[15]: Հռոմն իր նոր քաղաքականությամբ նպատակ ուներ փակել Հյուսիսային Կովկասի վաչկատուն ցեղերի հնարավոր մուտքը Այսրկովկաս:

Սպարապետության գործակալությունը հիմնականում, եթե չհաշվենք որոշ բացառություններ, պատկանել է Մամիկոնյանների իշխանական տանը, այլ խոսքով՝ հանդիսացել է նրանց տոհմական ժառանգական իրավունքը: Փավստոս

12 Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 24:
13 **«Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, § 873:
14 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, Եր., 1971, էջ 834:
15 Անդ:

Բուզանդի հավաստմամբ՝ նրանք ընդհանուր հրամանատարներ էին «ի վերայ իշխանութեան բովանդակ ի վերայ ամենայն զօրաց զօրավարութեանն բազմութեանն Հայոց Մեծաց»[16]:

Մեծանուն Ղ. Ալիշանը ենթադրել է, թե սպարապետն իբր առաջնորդել է թագավորության հետևակը, իսկ «ասպետ» Բագրատունին՝ այրուձին կամ հեծելազորը[17]: Սակայն այդ տեսակետը, միանգամայն իրավացիորեն, անընդունելի և սխալ է համարել ակադ. Հ. Մանանդյանը[18]: Ըստ Հ. Մանանդյանի՝ սկզբնաղբյուրները հավաստում են, որ պատերազմի ժամանակ Մեծ Հայքի ողջ զորքը՝ թե՛ արքունի և թե՛ նախարարական, կռվել է հայոց սպարապետի հրամանատարության ներքո, ինչը վերջինիս մեծ հեղինակություն էր տալիս: Անշուշտ, իրենց մեծ ազդեցությունն ու հեղինակությունը նրանք հիմնականում գործադրել են ի շահ հայոց թագավորության, սակայն երբեմն այն ի սպաս է դրվել ոչ թե հօգուտ թագավորության և արքունի իշխանության կենտրոնացման, այլ ի պաշտպանություն նախարարների իրավունքների անձեռնմխելիության:

Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդումներից պարզ է դառնում, որ սպարապետության պաշտոնը եղել է ժառանգական և այն անգամ անցել է Մամիկոնյանների տոհմի փոքրահասակ Արտավազդին, որը դեռ ոչնչով ի վիճակի չէր դրսևորելու իր ռազմական ունակությունները[19]: Հայոց Խոսրով Կոտակ թագավորի հրամանով Արտավազդ Մամիկոնյանի որդի սպարապետ Վաչե Մամիկոնյանը բնաջնջում է երկպառակտչական կռիվ սկսած Օրդունիների (իմա՛ Որդունիների) և Մանավազյանների նախարարական տները[20]: Մամիկոնյանները մեծ մասամբ վայելել են Հայոց թագավորների վստահությունը իրենց հավատարիմ ծառայության շնորհիվ[21]: Սպարապետները երբեմն կոչվել են նաև ստրատելատներ՝ հունարեն փոխառյալ տերմինով[22]: Սակայն Մանվել Մամիկոնյանը, չենթարկվելով թագավորական իշխանությանը, օգտագործել է սպարապետության պաշտոնի նկատմամբ Մամիկոնյանների ժառանգական իրավունքը, բռնի տիրացել է սպարապետությանը, որը Վարազդատ Արշակունի թագավորը շնորհել էր իր սիրեցյալ դայակ Բատ Սահառունուն[23]:

Հայոց սպարապետի ենթակայության տակ էին գտնվում արքունի չորս բդեշխները, որոնք գլխավորում էին թագավորության մեկ բյուրանոց զորաբանակները՝ սփռված երկրի չորս կողմերում: Հ. Մանանդյանի կարծիքով՝ բդեշխները եղել են առաջին կարգի իշխանություններ, որոնք քաղաքականապես եղել են գրեթե անկախ, բայց գտնվել են Հայ Արշակունիների գերիշխանության ներքո: Ըստ հեղինակի՝ բդեշխների իշխանությունները ընդարձակ երկրներ էին Մեծ Հայքի սահմանային շրջաններում, որի պատճառով էլ նրանք անվանվում են «սահմանապահք», «սահմանակալք» կամ էլ «կողմնապահք» և «կողմնակալք»[24]: Մեծ հայագետի տեսակետը, առաջին հայացքից, անխոցելի է, սակայն ստորև

16 **Փավստոս Բուզանդ,** Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Քերովբե Պատկանյանի, Եր., 1987, դպր. Դ, գլ. Բ, էջ 106: Տե՛ս նաև «Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», չորս դպրութիւնս, Վենետիկ, 1832, դպր. Դ, գլ. Բ:

17 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 423:

18 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934, էջ 73:

19 Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, դպր. Գ, գլ. ԺԱ:

20 Անդ, դպր. Գ, գլ. Դ:

21 Անդ, դպր. Գ, գլ. Ը:

22 Անդ, դպր. Դ, գլ. Բ:

23 Անդ, դպր. Ե, գլ. ԼԷ:

24 **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 34:

կտեսնենք, որ այն բոլորովին էլ ճիշտ չի արտացոլում իրերի վիճակը: Արդ, ի՞նչ է ասում բդեշխների մասին Ագաթանգեղոսը. «Ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդն՝ սահմանակալն յԱսորեստանեայց, զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն»[25]:

Ագաթանգեղոսի վկայությունը կարծես թե հստակ է, սակայն իրականում իր մեջ պարունակում է այնպիսի անորոշություններ, որոնք թյուրիմացության մեջ են գցում անգամ Հ. Մանանդյանին: Վերջինիս կարծիքով՝ Հայաստանի հարավարևելյան սահմանում իշխում էր «Նոր Շիրականի» կամ «Նուշիրականի» բդեաշխը, հարավային սահմանում՝ «յԱրուաստան կողմանէն», այսինքն՝ Հյուսիսային Միջագետքի և Մծբինի հյուսիսակողմում՝ «Աղձնեաց բդեաշխ»-ը, հարավարևմտյան սահմանում՝ «յԱսորեստանեայց կողմանէն», այսինքն՝ Ասորիքի դիմաց գտնվող շրջանում, հավանորեն՝ Ծոփաց բդեշխը (ըստ Յ. Մարքվարթի)[26] և հյուսիսում՝ «ի Մազքթաց կողմանէն», այսինքն՝ Իբերիայի Մեսխեթի շրջանի դիմաց՝ «Գուգարաց բդեաշխ»-ը[27]: Հարկ է խոստովանել, որ մեկնաբանությունը լիարժեք չէ: Նախ, Հ. Մանանդյանը հարել է Յ. Մարքվարթին, ըստ որի՝ «յԱսորեստանեայց կողմանէն»-ի բդեշխը համապատասխանել է Ծոփքի բդեշխին, որի մասին աղբյուրներում ընդհանրապես տեղեկություն չկա:

Ավելին, առնվազն վառ երևակայություն պետք է ունենալ կարծելու համար, թե «յԱսորեստանեայց կողմանէն» բդեշխը գտնվել է Ասորիքի դիմաց: Հայկական աղբյուրներում սկզբում հանդիպում են Աղձնեաց և Գուգարաց բդեշխությունները, որոնց ավելի ուշ միանում է Նոր Շիրականի բդեշխությունը[28]: Դժվար չէ համոզվել, որ չորրորդ բդեշխության անվանումը չկա, ինչը շատ կարևոր է և ցույց է տալիս, որ մեզ անհայտ անունով բդեշխն ի տարբերություն մյուսների, կալվածքներ չի ունեցել և այդ պատճառով էլ հականե-հանվանե չի հիշատակվում: Այլ խոսքով, բդեշխները՝ որպես արքունի կողմնապահ, սահմանակալ կամ կուսակալ հրամանատարներ, որոնց խնդիրն էր պաշտպանել Մեծ Հայքի թագավորության սահմանը չորս կողմերից որևէ մեկի ուղղությամբ, սկզբում սեփական տիրույթներ կամ կալվածքներ չեն ունեցել, այլ ժամանակի ընթացքում նրանցից երկուսը՝ Աղձնիքն ու Գուգարքը, իսկ այնուհետև՝ Մծբինի 298 թ. հաշտությունից հետո, Նոր Շիրականինը, արքունիքից ստացել են իրենց կառավարմանը հանձնված գավառների նկատմամբ ժառանգական իրավունք: Ըստ որում, ի տարբերություն մյուս խոշոր իշխանների, ունեցել են իրենց ենթակայության տակ գտնվող նախարարություններ, որոնք չեն մտել արքունի «Գահնամակ»-ի մեջ և թագավորի ստորակա կամ վասալ իշխաններ չեն եղել: Այլ խոսքով՝ Հայաստանում նույնպես գործել է «Իմ վասալի վասալը իմ վասալը չէ» սկզբունքը: Աղձնյաց բդեշխին ենթակա նախարարությունների անունները մեզ չեն հասել, բայց Աղձնիքի գավառների նկարագրությունից կարելի է ենթադրել, որ դրանք էին Կեթիկը, Տատիկը, Ազնվաց ձորը, Էրխեթքը, Գզեղխը և Սալնոձորը[29]: Փավստոս Բուզանդի մի հաղորդումից աներկբայորեն կարելի է եզրակացնել, որ Նոր Շիրականի բդեշխությանը

25 Ագաթանգեղոս, § 873:
26 Տե՛ս **J. Markwart,** Ērānšahr, nach der Geographie des Ps. Moses Xorenac'I, Berlin, 1901, էջ 171-173:
27 **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 34-35:
28 Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** դպր. Գ, գլ. Թ, դպր. Դ, գլ. Օ, դպր. Ե, գլ. ԺԶ: Մ. Խորենացի, գիրք Բ, գլ. Ը, գիրք Ա, գլ. ԻԳ :
29 Տե՛ս **«Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 30-31: Աշ.** Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 349:

ենթարկվել են Նիխորականի, Դասնի և Մահկերտ-տան, իսկ Գուգարաց բդեշխությանը՝ Ձորի և Կողբի իշխանությունները[30]:

Մեծապես ուշադրության է արժանի այն իրողությունը, որ արքունիքը, ելնելով պետական անվտանգության խնդիրներից, չի թույլատրել, որ բդեշխների անձնական զորքը հանդես գա բդեշխի հրամանատարության տակ գտնվող արքունի զորաբանակի հետ: Համենայն դեպս, Աղձնեաց բդեշխի նախարարական զորքը գտնվել է Անգեղտան իշխանի կողմից գլխավորվող արևմտյան դռան զորաբանակի մեջ, որին կանդրադառնանք ստորև: Ն. Ադոնցի կարծիքով, բդեշխները չեն մտել «Գահնամակ»-ի մեջ և օգտվել են արտոնյալ կարգավիճակից՝ գրեթե հավասար ճանաչվելով արքային[31]: Այդ տեսակետի հետ համաձայնել չի կարելի, քանի որ մեզ հասած «Գահնամակ»-ը ստեղծվել է մի շրջանում, երբ բդեշխությունները՝ որպես նախարարական տիրույթ, հանվել էին Մեծ Հայքի թագավորությունից:

Հետաքրքիր տեսակետ է առաջ քաշել գերմանացի հայագետ Յ. Մարքվարթը: Նրա կարծիքով, Պլուտարքոսի հիշատակած չորս թագավորները, որոնք արշավանքների ժամանակ ուղեկցում էին Տիգրան Մեծին, նույնանում են հենց հիշյալ չորս բդեշխներին[32]: Այլ խոսքով՝ Յ. Մարքվարթը բդեշխությունների ծագումը ենթադրում է Տիգրան Մեծի ժամանակներում: Այս տեսակետն ընդունել է Ն. Ադոնցը և անգամ ենթադրել, որ բդեշխները փոքր և ինքնուրույն թագավորներ են եղել, որոնք, Տիգրան Մեծի ժամանակներից սկսած, ճանաչել էին հայոց թագավորի գերիշխանությունը[33]:

Կարծում ենք, որ հիմնավոր չէ Հ. Մանանդյանի մեկ այլ կարծիքը ևս, թե բդեշխներն իբրև թագավորներին գրեթե իրավահավասար իշխաններ, նախարարական կազմի շրջանակից դուրս են համարվել, որի ապացույցն է իբր այն իրողությունը, որ նրանք Արշակունյաց թագավորության մեջ չեն վարել գործակալական պաշտոններ[34]: Իրականում բդեշխական ծառայությունը նույնպես, ըստ էության, գործակալական ծառայություն էր՝ զինվորական առումով: Այնուհետև բդեշխները բոլորովին էլ հավասար իրավասություններ չեն ունեցել: Այն հանգամանքը, որ Աղձնյաց բդեշխը կոչվում էր «մեծ իշխան», իսկ Գուգարացվոց բդեշխը՝ «միւս բդեաշխ», ցույց է տալիս, որ, ամենայն հավանականությամբ, Աղձնյաց բդեշխությունը ավելի բարձր գահ էր գրավում, քան Գուգարացվոցը: Ըստ այդմ՝ դրանցից ավելի ցածր գահեր պետք է զբաղեցնեին Նոր Շիրականի և «յԱսորեստանեայց կողմանէն» անհայտ անունով բդեշխը: Այն իրողությունը, որ նրանք «Գահնամակ»-ից դուրս չէին, պարզ հավաստում է Փավստոս Բուզանդը. «…մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի ի չորից. գահերէց բարձերէց տաճարին»[35]:

Արքունական զորքերի մի որոշակի հատվածը կազմում էին Արքունի թիկնապահ գնդի կամ Մաղխազական գնդի զինվորները: Այդ գունդը գլխավորում էր մաղխազը, որը, Ն. Ադոնցի կարծիքով, նշանակել է «տեր, իշխան, թագավոր»[36]: Այս գործակալությունը հանդիսացել է Խորխորունիների ժառանգական իրավուն-

30 Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** դպր. Դ, գլ. Ը:
31 Տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, стр. 283.
32 Տե՛ս **J. Markwart,** Ērānšahr, էջ 171-173:
33 Տե՛ս **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, стр. 35.
34 Տե՛ս **Հ. Մանանդյան,** Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 35:
35 **Փ. Բուզանդ,** դպր. Գ, գլ. Թ:
36 **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, стр. 400.

քը: Պատմահայրը մաղխազական պաշտոնի մասին գրել է. «Եւ թիկնապահս իւր զինու հանդերձ (կարգէ) ի զավակացն Խոռայ Հայկազնոյ արս ընտիրս և քաջս, նիզակաւորս և սուսերաւորս և գլուխ նահապետ նոցա զՄաղխազ ոմն, բայց անուն ազգին զնախնականն պահէ»[37]: Մաղխազական գնդի պարտականությունն էր արքայի և արքունիքի պաշտպանությունը: Գործակալությունը վարող Խորխոռունիները հանդիսանում էին երկրի նախարարական առավել նշանավոր տներից մեկը:

Հայոց բանակի մեծաթիվ զորաբանակներից էր Մարդպետական գունդը, որի գլուխ կանգնած էր հայր-մարդպետը, որը ղեկավարում էր ոչ միայն այդ զորաբանակը, այլև իրականացնում էր գործակալական իշխանություն: Ն. Ադոնցը ենթադրել է, որ «մարդպետ» նշանակել է սկզբում «մարդ» ցեղի պետ, որը նշանավոր ցեղ էր Մարաստանում: Ըստ հեղինակի՝ հետագայում «մարդպետ»-ը դարձել է նախարարական տան տիտղոս[38]: Համաձայն «Զօրանամակ»-ի և այլ սկզբնաղբյուրների՝ մարդպետների պարտականությունն էր պահպանել թագուհուն, այլ խոսքով՝ թագավորական ընտանիքը, ինչպես նաև ունենալ արքունի գանձերի վերահսկողության իրավունքը[39]: Սկզբնաղբյուրների մյուս տեղեկություններից դժվար չէ տեսնել, որ թեկուզև ներքինի, մարդպետները վարում էին ներքին գործերը՝ իրենց իրավունք վերապահելով ոչնչացնել արքունիքի համար վտանգ ներկայացնող նախարարությունները[40], իսկ Մարդպետականի հատվածում պաշտպանում էին Մեծ Հայքի սահմանները՝ իրենց զորքի մի մասը տեղակայելով սահմանային Գանձակ քաղաքում[41], ինչպես նաև պաշտպանում էին արքունի բերդերն ու ամրությունները[42]: Հարկ է, սակայն, ընդգծել, որ Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան որոշ երկրամասերում արքունի բերդերը, մասնավորապես Ծոփքի Բնաբեղ բերդը, որտեղ պահվում էին արքունի գանձերը, գտնվում էին Անգեղտան իշխանների վերահսկողության ներքո, քանի որ սկիզբ առնելով Ծոփքի թագավորության ժամանակներից, երբ վերջինս ուներ այսպես կոչված «Գազոֆիլակոս»-ի՝ արքունի գանձերը վերահսկողի պաշտոնը, Անգեղտան իշխանությունը, որպես առանձին գործակալություն, պահպանվեց Մեծ Հայքի թագավորության, նախկինում՝ Ծոփքի թագավորության տարածքում՝ որպես հակակշիռ Մեծ Հայքի «Գազոֆիլակոս»-ի, որը հայտնի էր մարդպետ անունով[43]:

Հակառակ մեծանուն Ն. Ադոնցի, այնուամենայնիվ, Մարդպետական ժառանգական ընտանիք գոյություն չի ունեցել, քանի որ մարդպետները ներքինիներ էին: Անշուշտ, կարելի է ենթադրել, թե մարդպետներ են եղել «մարդ» ցեղի ներքինացված ազգապետերը: Թվում է, թե այդ տեսակետը կասկածներ չի հարուցում, սակայն հազիվ թե կարելի է կարծել, որ «մարդ» ցեղի առաջնորդները կգնային նման քայլի: Մեր կարծիքով, ավելի հավանական է ենթադրել, որ հայոց թագավորը ունեցել է «մարդ» ցեղի ներկայացուցիչներից կազմված թիկնապահ գունդ, որի գլուխ նշանակվել է ներքինացված հրամանատարը, որը, հասկանալի պատճա-

37 **Մովսես Խորենացի,** գիրք Բ, գլ. Է:

38 **Տե՛ս Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, էջ 319:

39 **Տե՛ս «Զօրանամակ», տե՛ս** Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 251:

40 **Տե՛ս Փավստոս Բուզանդ,** դպր. Գ, գլ. ԺԳ:

41 **Տե՛ս Փավստոս Բուզանդ,** դպր. Ե, գլ. Զ:

42 **Չնայած այս տեղեկությունը պատմիչը հայտնում է Անգեղտան իշխան Դրաստամատի** կապակցությամբ, սակայն դժվար չէ տեսնել, որ այդ պարտականությունն ունեին նաև մարդպետները (Փավստոս Բուզանդ, դպր. Ե, գլ. Ժ):

43 **Տե՛ս Փավստոս Բուզանդ,** դպր. Ե, գլ. Է:

ռով, պետք է կոչվեր մարդպետ: Սակայն ժամանակի ընթացքում «մարդերի» իրանական ցեղը հայացավ, և մարդպետական գունդ սկսեցին ընդունել արդեն հայերի և հայացած մարդերի, սակայն գնդի հրամանատարը, որ կարող էր ցանկացած տոհմի ներքինացված ներկայացուցիչ լինել, ավանդույթի ուժով շարունակեց կոչվել «մարդպետ»[44]:

«Զօրանամակ»-ի մեջ տրված են նախարարական զորաջոկատների չորս դռները, սակայն հայտնի չէ նրանց հրամանատարների կոչումը: Սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ նախարարական զորքի չորս դռների հրամանատարները կոչվել են սպարապետներ: Պատմահայրը, խոսելով հայոց Խոսրով Բ Կոտակ թագավորին գահ բարձրացրած հռոմեական զորավար Անտիոքոսի մասին, նշում է. «Եկեալ Անտիոքոս թագաւորեցոյց զԽոսրով, և զչորեսին սպարապետսն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու, զոր կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ, որ միագլուխ սպարապետ էր և ամենայն Հայոց զօրավար»[45]: Պատմահոր հավաստմամբ՝ սպարապետներ են եղել այդ ժամանակ Բագարատ ասպետը՝ արևմտյան դռանը, Միհրան Գուգարաց բդեշխը՝ հյուսիսային դռանը, Վահան Ամատունին՝ արևելյան դռանը, և Մանաճիհր Ռշտունին՝ հարավային դռանը[46]:

Սկզբնաղբյուրները պարզորոշ հավաստում են, որ սպարապետների իշխանությունը ժառանգական չի եղել: Այսպես, «Զօրանամակ»-ում սպարապետներ են եղել արևմուտքում՝ Անգեղտան իշխանը, արևելքում՝ Սյունյաց իշխանը, հյուսիսում՝ Գուգարացվոց բդեշխը և հարավում՝ Կաղմեացին[47]: Այստեղ մտահոգիչ է Կաղմեացի նախարարական տան հիշատակությունը, քանի որ Ստեփանոս Օրբելյանի մոտ, եթե մյուս սպարապետներն էին Անգեղտան, Բագրատունյաց և Սյունյաց նախարարները, ապա հարավային կողմում հիշատակվում է Կորդվացին (հեղինակի մոտ սխալմամբ՝ արևմուտքում, իսկ Անգեղտան իշխանը՝ հարավում և ոչ թե արևմուտքում)[48]: Սյունյաց պատմիչի մոտ հարավային դռանը Կորդվացի նախարարության հիշատակությունը մեզ բերում է մի շատ հետաքրքիր եզրակացության: Մենք արդեն նշեցինք, որ Կաղմեացիի մարտադաշտ դուրս բերած 13 200 մարտիկներից 10 000-ը իրականում արքունի թիկնապահ գնդի զինուժն էր, իսկ այժմ արձանագրենք ևս մի բան, որ առավել քան հավանական է: Մնացյալ 3 200 զիվորները եղել են Նոր Շիրականի բդեշխության ուժերը: Հասկանալի է, որ սեփական տիրույթներ ունեցող Նոր Շիրականի բդեշխությունը չէր կարող չունենալ սեփական ուժեր, որոնք թաքնված ձևով պահպանվել են Կաղմեացի կոչվող նախարարության զինուժի մեջ: Հետևաբար, ինչպես Աղձնիքի բդեշխի դեպքում, այնպես էլ Նոր Շիրականի բդեշխի զորաջոկատը կռվել է Կորդվացվոց սպարապետի հրամանատարության ներքո: Այսպիսով, լոկ թյուրիմացությանը պետք է վերագրել «Զօրանամակ»-ի այն տեղեկությունը, թե Կաղմեացվոց իշխանությունը եղել է հարավային դռան սպարապետ:

331 թվին, երբ Մազքթաց Սանեսան թագավորը նշանակալից ուժերով ներխուժեց Մեծ Հայքի թագավորություն, հայերը Վաչե սպարապետի գլխավորությամբ ճակատամարտ տվեցին Օշականի մոտ: Նրան օգնում էին Բագարատ

44 **Մովսես Խորենացի,** գիրք Գ, գլ. Զ:
45 Անդ:
46 Անդ:
47 **«Զօրանամակ», տե՛ս Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, с. 250-251.
48 Տե՛ս **Ստեփաննոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 25-26:

Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները, Վասակ Ամատունին և Վարազ Կամինականը[49]: Պատմիչը հիշյալ նախարարներին պարզապես կոչում է սպարապետի զինակիցներ, սակայն, դատելով ամեն ինչից, դրանք կամ դռների հրամանատարներ էին, կամ նրանց տեղապահներ: Ինչպես և Պատմահոր մոտ, նրանցից մեկը Բագարատ Բագրատունի սպարապետն է: Ըստ երևույթին, ինչ-ինչ պատճառներով Մանաճիհր Ռշտունի սպարապետը չի մասնակցել Օշականի ճակատամարտին, և նրան փոխարինել են նրա ազգակիցներ Մեհենդակը (Մեհունդակը) և Գարեգինը, իսկ Վահան Ամատունի զորավարը նույնական է Մովսես Խորենացու մոտ Վահան Ամատունուն, որի օգնականն է Վարազ Կամինականը: Անշուշտ, տարօրինակ է, որ ցանկում չի հիշատակված Միհրան բդեշխը և հյուսիսի սպարապետը: Սակայն դա էլ հասկանալի է, քանի որ ռազմակալված հյուսիսից հնարավոր չի եղել զորք հավաքել:

«Զօրանամակ»-ում Արևմտյան թևի սպարապետը ոչ թե Բագրատունյաց իշխանն է, այլ Անգեղտան, իսկ Արևելյան դռան սպարապետը այլևս Ամատունյաց իշխանը չէ, այլ ռազմական ուժով ավելի աչքի ընկնող Սյունյաց իշխանը: Համենայն դեպս, Բագրատունիները հիշվում են որպես սպարապետ՝ ի դեմս Բագարատի, Արշակ Բ թագավորի օրոք[50]: Չնայած անվանապես Պարգև Ամատունի, Մեհենդակ Ռշտունի և Սյունյաց Անդովկ իշխանները չեն հիշատակվում սպարապետներ՝ Ներսես կաթողիկոսին ձեռնադրելու համար Կեսարիա ուղեկցող նախարարների թվում[51], սակայն աներկբա է, որ նրանք այդ շրջանում եղել են սպարապետներ, իսկ չորրորդը եղել է բդեշխության և սպարապետության իրավունքը միավորած Գուգարաց բդեշխը:

Արշակ Բ արքայի օրոք հայոց միասնական սպարապետը Վասակ Մամիկոնյանն էր, սակայն մյուս սպարապետների մասին կարելի է ասել, թե վերը հիշված նախարարական տների ներկայացուցիչներ են եղել[52]: Չի բացառվում, որ Արշակ Բ արքան ավելորդ է համարել չորս սպարապետ ունենալը, քանի որ պարսկական արշավանքների ընթացքում, որպես կանոն, թշնամուն ընդառաջ էր գնում Վասակ Մամիկոնյանը: Պատահական չէ, որ Արշակ Բ արքայի կապակցությամբ Անգեղտան իշխան Դրաստամատին հիշելիս Փավստոս Բուզանդը նրան մեծարում է ամեն կերպ, սակայն որպես սպարապետ չի հիշատակում:

Աներկբա է, որ չորս սպարապետությունները գոյություն են ունեցել նաև Արշակ Բ-ի որդի Պապ թագավորի օրոք: Պատմահայրն այդ մասին գրում է. «…ուր սաստկապէս նահատակեալ քաջութեամբ ընդդիմամարտ լինէր Գնել նահապետ Անձևացեաց և սպարապետ Պապայ արևելեան զօրուն…»[53]: Միասնական սպարապետ և չորս դռների սպարապետ ունենալու կարգը, այնուամենայնիվ, շարունակվեց մինչև 387 թվականը, երբ Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Երկու մասում էլ որոշ ժամանակ պահպանվեցին ստորակա թագավորությունները, սակայն նախկին համակարգն այլևս չպահպանվեց:

3. Հայոց բանակի զինվորական կառույցի ստորին օղակները

49 Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** դպր. Գ, գլ. Է:
50 Անդ, դպր. Դ, գլ. Դ:
51 Անդ:
52 Թերևս այսպես պետք է ընկալել Փավստոս Բուզանդի հետևյալ հաղորդումը. «…զիւրաքանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր», տե՛ս **Փավստոս Բուզանդ,** դպր. Դ, գլ. Բ:
53 **Մովսես Խորենացի,** գիրք Գ, գլ. ԼԹ:

Մենք անդրադարձանք հայոց բանակի խոշոր ստորաբաժանումներին, որոնք, սակայն, իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր զինվորական միավորների: Այս առումով կացությունը ավելի հստակ էր նախարարական զորամիավորումներից բաղկացած չորս սպարապետական զորաբանակներում[54]: Սակայն այստեղ էլ պարզ չէ, թե դրանք ինչ կարգավիճակով էին հանդես գալիս: Ինչպես արքունական **բյուրերը**, Մաղխազական և Մարդպետական **գնդերը**, ամենայն հավանականությամբ, նույնպես բաժանվում էին զինվորական ավելի փոքր միավորների: Դժբախտաբար, պատմությունը հստակ հիշատակներ չի պահպանել դրանց որոշակի մեծության մասին, պահպանվել են միայն ստորաբաժանումների անվանումները:

Զինվորական ստորաբաժանման առումով սկզբնաղբյուրներում շատ է օգտագործվում **գունդը:** Սակայն աղբյուրների տեղեկությունները, հարկ է խոստովանել, շատ հակասական են: Այն երբեմն օգտագործվում է ողջ հայոց բանակի, երբեմն նրա մեծ ստորաբաժանումների և երբեմն էլ ավելի փոքր ստորաբաժանումների համար: Եթե Մարդպետական զորաբանակը կոչվում էր Մարդպետական գունդ, իսկ ավելի ուշ նաև՝ Սեպհական գունդ կամ Վասպուրական գունդ, ապա տվյալ դեպքում խոսքը վերաբերում է խոշոր ստորաբաժանմանը: Սակայն, եթե Վասակ Մամիկոնյան սպարապետը «Տայր հրաման…իւրում՝ զօրավարին զօր ժողովել, զգունդս վանդակել»-ն[55] էր կատարում, ապա խոսքը, անտարակույս, ավելի փոքր ստորաբաժանման մասին է:

Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ում տեղեկություն է պահպանվել **Այրարատյան գնդի** մասին: Հեղինակը գրում է.«Վասակ (Մամիկոնյան սպարապետը-Բ.Հ.) հանդերձ ամենայն պատերազմող զօրօքն Այրայրատեան[56] գնդաւն ելանէր, անկանէր ի վէրայ (պարսից-Բ.Հ.) բանակին»[57]: Ղ. Ինճիճյանի կարծիքով՝ այն պետք է հասկանալ որպես «…փոխանակ համօրէն Այրարատեան, նահանգին զորաց»[58]: Եթե Մխիթարյան միաբանը ճիշտ է, ապա պետք է ենթադրել նմանօրինակ գնդերի քանակը 19 կամ 20, քանի որ մեր խնդրո ժամանակաշրջանում դեռ առանձին աշխարհներ էին կազմում նաև Կղարջքը, Գարդմանացիքը, Մարդպետականը, Արսիքը (Արսեսան) և, հավանաբար, հայոց թագավորների ձեռական իշխանության երկիրը Ատրպատականում: Այս տեսակետը կարծես թե ամրապնդվում է Մարդպետական գնդի առկայությամբ: Սակայն, մեր կարծիքով, դա հարմար փաստարկ չէ, քանի որ Մարդպետական գունդը ներկայացնում էր երկրի ներքին ուժերը և ոչ թե պարզապես Մարդպետական աշխարհը, որը 428 թվից հետո միացվեց Ռշտունյաց աշխարհին, և ձևավորվեց Վասպուրականը: Մենք ավելի հակված ենք կարծելու, որ Այրարատյան գունդ է կոչվել Արքունի Մաղխազական կամ թիկնապահ գնդի այն հատվածը, որ թագավորի հետ մեկնում էր պատերազմի կամ բանակցությունների: Հնարավոր է թերևս ենթադրել, որ Մաղխազական գնդի 10 հազար զինվորներից 5 000-ը մաս են կազմել Այրարատյան գնդի: Սակայն դա ընդամենը ենթադրություն է:

Փավստոս Բուզանդը հիշատակություն ունի նաև **Մատենիկ գնդի** մասին. «Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբայ նահապետի Բզնունեաց՝ գուգազ հա-

54 **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, стр. 250-251.
55 **Փ. Բուզանդ,** դպր. Դ, գլ. ԺԱ:
56 Անդ,դպր. Դ, գլ. ……:
57 Պետք է լինի Այրարատյան:
58 **Ղ. Ինճիճյան,** Հնախօսութիւն…, հատ. Բ, էջ 272:

նել յաշխարհէ աւելի քան զչափն. եւ զհամար զօրսն մատենի գնդաւն… »[59]: Ղ. Ինճիճյանը հակված է կարծելու, որ այն նման է պարսկական մատեան գնդին՝ «իբր անմահ երցօղ ընդդէմ մահու»[60]: Մենք ավելի հակված ենք ընդունելու Ն. Արզումանյանի տեսակետը, որ այդպես է կոչվել միայն էգ ձիերից կազմված հեծելազորը: Հայտնի է, որ Լոռվա բարբառում էգ ձին մինչև օրս էլ կոչվում է մադիան[61]: Մատենիկ գնդի ձիերի արագությունն ավելի փոքր էր, քան արու նժույգներով հեծյալ զորամասերինը, սակայն այն աչքի էր ընկնում իր մեծ դիմացկունությամբ և անփոխարինելի էր թշնամուն հետապնդելիս և հետախուզելիս: Պիտի ենթադրել, որ «Մատեան գունդը» կամ «Մատենիկ գունդը» եղել է արքունի բյուրերից մեկի կազմում:

Մենք չենք անդրադառնում **Մարզպանական**, **Տանուտիրական գնդերին**, քանի որ ժամանակագրորեն դուրս են մեր քննության շրջանակներից: Թե քանի մարտիկներից է կազմված եղել գունդը, դժվար է ասել: Վերը մենք փորձեցինք Այրարատյան գնդին վերագրել 5 հազար զինվոր, սակայն բնավ չի բացառվում, որ գնդի քանակությունն ավելի փոքր է եղել, բայց, իհարկե, ոչ պակաս 3 հազարից:

Գնդերը բաժանվել են **հազարյակների**, որոնց գլուխ կանգնած էր հազարապետը: Ճիշտ է, Մեծ Հայքի թագավորությունում հազարապետ էր կոչվում երկրի տնտեսական հարցերով զբաղվող արքունի գործակալը, սակայն անտարակույս է, որ հայոց բանակը հրամանատարների թվում պետք է ունենար նաև հազարապետներ, քանի որ հայկական բանակը կազմված էր 10, 50, 100, 1000 զինվորանոց զորամասերի սկզբունքով:

Անտարակույս է, որ հայոց բանակի հրամանատարների կազմում պետք է լինեին նաև **հարյուրապետներ**, չնայած հայկական աղբյուրներն այդ մասին տեղեկություններ չեն պահպանել: Նախարարությունների զորաքանակների կլոր թվերով արտահայտվելը նման պաշտոնյայի գոյության մասին է հավաստում: Հասկանալի է, որ եթե նախարարությունը մարտադաշտ էր դուրս բերում երեք հարյուր մարտիկ, ապա այն պետք է կազմված լիներ երեք հարյուրյակից, որի գլուխ կանգնելու էր հարյուրապետը:

Սկզբնաղբյուրներում հիշատակվող **գումարտակը,** թվում է, ավելի շուտ մարտիկների մի խումբ է, քան որոշակի զորամաս: «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանում իրավացիորեն ասված է. «գումար՝ մանաւանդ զօրու. բանակ.. ճակատ. դաս. խումբ և բազմութիւն»[62]: Մովսես Խորենացու[63] և այլ հեղինակների տվյալները դա են հավաստում:

Վաշտը եղել է որոշակի ստորաբաժանում, որ մարտադաշտ է դուրս եկել առանձին դրոշակով[64]: Ըստ Մովսես Խորենացու՝ «Նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք» տեղեկությունից դժվար չէ եզրակացնել, որ նախարարությունների մարտադաշտ բերած զորաջոկատները վաշտեր էին: Մեկ այլ կապակցությամբ Պատմահայրը հայտնում է. «որք միանգամ անազգիք էին ի

59 **Փավստոս Բուզանդ,** դպր. Գ., գլ. Ը: Փավստոս Բուզանդի մի շարք ձեռագրերում գունդը անվանվում է «մատենիկ»:
60 **Ղ. Ինճիճյան,** Հնախօսութիւն…, հատ. Բ, էջ 274:
61 Տե՛ս **Ն. Արզումանյան,** Հայկական աղբյուրներում հիշատակված «Մատեան գունդ» զորամասը, ՊԲՀ, 1973, էջ 154-162:
62 **«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Ա, Եր., 1979, էջ 579-580:**
63 Տե՛ս **Մովսես Խորենացի,** գիրք, Գ, գլ. Թ:
64 Տե՛ս **«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. Բ, Եր., 1981, էջ 784:**

վաշտս, և անձամբ երևելիք»[65]: «Զօրանամակ»-ից պետք է կարծել, որ վաշտի նվազագույն քանակությունը 50 մարտիկ էր, որը կարող էր ղեկավարվել հիսնապետի կողմից, սակայն վերջինիս մասին պատմությունը նույնպես հիշատակներ չի պահպանել: Փավստոս Բուզանդը վաշտի մասին հայտնում է հետևյալը. «… ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց…»: Մեկ այլ կապակցությամբ նա գրում է. «Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում»[66]:

Սույն հոդվածում, հասկանալի պատճառներով, մենք մեր առջև խնդիր չենք դնում քննության առնել հայոց բանակին առնչվող այլ հարցեր, ինչպիսիք են **սպառազինությունը**, **ռազմական արվեստը** և այլն, քանի որ դրանք պահանջում են հատուկ ուսումնասիրություն: Լոկ հավելենք, որ արքունական չորս բյուրերը կայազորների տեսքով տեղակայվում էին թագավորության տարբեր մասերում, որոնք սովորաբար կրում էին բանակ կամ կայան անվանումները, որոնք իրենց անունը տվեցին շատ դեպքերում՝ կայազորային կենտրոն հանդիսացած բերդերին ու ամրոցներին և կայազորների հարևանությամբ հանդես եկած բնակավայրերին: Որպես օրինակ նշենք Բանակ բնակավայրը Տայքում, որի անունը պահպանվել է աղավաղված Փենյակ տեսքով և Կայան անունը կրող ամրոցները՝ Գուգարքում և Հայաստանի այլ մասերում: Բանակի արքունական և նախարարական զորամասերը կազմված էին ազատագունդ զինվորներից:

Ինչ վերաբերում է նախարարական զորաջոկատներին, ապա դրանք, հասկանալի պատճառներով, տեղադրվում էին համապատասխան նախարարությունների տարածքներում: Դատելով սկզբնաղբյուրների որոշ անուղղակի կցկտուր հաղորդումներից՝ Հայոց բանակի 120 հազար զինվորները ամբողջ կազմով չեն գտնվել կանոնավոր, մշտական զինվորական ծառայության մեջ: Սակայն այդ մասին, դժբախտաբար, սկզբնաղբյուրները հստակ տեղեկություններ չեն պահպանել: Ավելորդ է ասել, որ մշտական կանոնավոր զինվորական ծառայություն կատարողների թիվը շատ մեծ էր արքունական զորամասերում և շատ ավելի փոքր՝ նախարարական զորաջոկատներում:

Պատերազմական կարիքներից ելնելով, երբ զինվորների պակաս էր զգացվում, շինականներից և գեղջուկներից աշխարհազոր էր կազմվում:

Արդ, ի՞նչ եզրակացությունների կարելի է գալ:

Հայոց բանակը իրոք կազմված է եղել 120 հազար զինվորներից, և այդ թվաքանակը, ամենայն հավանականությամբ, կապված է Մեծ Հայքի թագավորության 120 ստրատեգիաներից կամ զորավարությունից բաղկացած լինելու իրողության հետ, ինչի մասին հայտնում է Պլինիոս Ավագը[67]: Այլ խոսքով, յուրաքանչյուր ստրատեգիա, որ իրականում համապատասխանել է գավառին, միջին հաշվով ռազմադաշտ է դուրս բերել 1000 զինվոր:

Արքունական՝ չորս թևերի վրա բաժանված ուժերը կազմել են 40 հազար մարտիկ: Դրանք ձևավորել են մեկ բյուրից բաղկացած 4 զորաբանակ, որոնք առաջնորդվել են բդեշխների կողմից: Դրանցից Աղձնյացը և Գուգարացը բավական վաղ ժամանակներից ունեցել են սեփական տիրույթներ, նրանց է միացել Նոր Շիրականի բդեշխությունը 298 թվից հետո, իսկ չորրորդը, որի անունն իսկ չի պահպանվել, սեփական տիրույթներ չի ունեցել:

65 **Մովսես Խորենացի,** գիրք, Բ, գլ. ԿԴ:
66 **Փավստոս Բուզանդ**, դպր., Դ, գլ. ԺԵ:
67 Տե՛ս **Plin.**, NH, VI, 9:

Արքունական զորաբանակների թվին էր պատկանում Արքունի թիկնապահ գունդը կամ Մաղխազական գունդը, որը կազմված է եղել 10000 մարտիկներից, որոնցից 6000-ը մշտապես ուղեկցել են արքային պատերազմների ժամանակ կամ այլ հանգամանքներում: 4000 զինվորները մշտապես գտնվել են թագավորության մայրաքաղաքում և ապահովել են արքունիքի անվտանգությունը:

Երկրի ներքին կարգն ու կանոնը ապահովող Մարդպետական գունդը, որը փաստորեն նույնպես արքունական զորաբանակ էր, կազմված է եղել 15 հազար մարտիկներից, իսկ գնդի հրամանատարը՝ հայր-մարդպետը, պարտավոր է եղել ապահովել նաև թագուհու և կանանոցի անվտանգությունը, վերահսկել արքունի գանձերը կամ՝ ավելի ճիշտ, դրանց մեծ մասը, քանի որ արքունի գանձերի մի մասի վերահսկողությունը դրված է եղել Անգեղտան իշխանի վրա:

Այսպիսով, արքունի զորաբանակների մարտիկների թիվը կազմել է 65 հազար, ինչը հնարավորություն է տվել արքային զսպելու նախարարական հնարավոր ընդվզումները:

Նախարարական զորաջոկատների մարտիկների թիվը իրականում կազմել է 55 հազար, սակայն դժվար է որոշել այդ ուժերի բաշխվածությունն ըստ չորս թևերի, քանի որ մեզ հասած «Զօրանամակ»-ի օրինակը գրական փաստաթուղթ է՝ ենթարկված մի շարք աղավաղումների: Ամբողջությամբ վերականգնել այն նախնական տեսքով պարզապես հնարավոր չէ:

Սյունյաց իշխանությանը վերագրվող 19400 հեծյալի կամ մարտիկի տեղեկությունը կրում է իր վրա մարզպանական շրջանի ազդեցության կնիքը, երբ Հայոց մարզպան էր Վասակ Սյունին: Սյունյաց իշխանության զորքերի մեջ է ներառվել նաև Մարզպանական գնդի 15 հազարանոց ներուժը, որը համընկել է Մարդպետական գնդի թվաքանակին:

13200 մարտիկ հաշվող Կաղմեացվոց իշխանության զինուժի մեջ իրականում թաքնված պահպանվել են արքունի թիկնապահ գնդի 10 հազարանոց ուժերը և Նոր Շիրականի բդեշխության 3200 մարտիկներից բաղկացած զինուժը:

Ամատունյաց նախարարության անունը «Զօրանամակ»-ում պահպանվել է Ամասկոնի աղավաղված գրությամբ, որն իբր՝ մարտադաշտ է դուրս բերել 200 զինվոր: Քննությունը ցույց է տալիս, որ Ամատունիների զինուժը կազմել է իրականում 800 կամ 900 մարտիկ, որոնց նշանակալից մասը՝ 400 մարտիկ, թաքնված ձևով մնացել է Վահունիների զինուժի կամ էլ 500 մարտիկ՝ Բագրատունիների զինուժի մեջ:

Նախարարական զորաջոկատները ղեկավարվել են 4 սպարապետների կողմից:

Հայոց բանակի արքունական զորաբանակներից 4000 մարտիկներ զինակալել են Վիրքի և այսպես կոչված Աղվանից թագավորությունները:

Հայոց բանակի հրամանատարը պաշտոնապես հանդիսացել է Մեծ Հայքի թագավորը: Սակայն պատերազմի ժամանակ ողջ բանակը կռվել է ընդհանրական սպարապետի հրամանատարությամբ:

Պատերազմական կարիքներից ելնելով՝ երբեմն գումարվել է աշխարհազոր՝ կազմված, որպես կանոն, հետևակայիններից:

Summary

THE ARMY OF THE ARSACID KINGDOM OF GREAT ARMENIA ACCORDING TO "ZORANAMAK" (MILITARY LIST)

Dedicated to the 20th Anniversary of the creation of the Republic of Armenia's Armed Forces

Babken H. Harutyunyan

We have received a very interesting document, conditionally named by researchers "Zoranamak" (Military list), since it has preserved detailed information about armed forces of the principalities (in Armenian - nakhararutyun) of the kingdom of Great Armenia.

The Armenian Army was comprised of 120 thousand soldiers and this number most probably represented the 120 strategies (or generalships) in the kingdom of Great Armenia, as stated by roman author Plinius Secundus. In other words, each strategy which corresponded to an Armenian gavar or province has brought to battlefield an average of 1000 soldiers.

The Armenian royal forces was divided into four flanks and formed a group of forty thousand combatants who then formed four military units, which operated under the command of Bdeshkhs or royal frontier-keeper leaders. From these, the Bdeshkhs of Aghdznik and Gugark had their own proprietorships from quite ancient times. The Bdeshkhs of New Shirakani (Նոր Շիրական) joined them after the year 298, and the forth whose name has not been preserved, owned no proprietorships.

To the number of royal armed forces belonged the Royal guard regiment or Malkhazyan guard regiment, which was comprised of 10000 combatants, out of which 6000 were always deployed for the king during wars or other circumstances. 4000 soldiers of this regiment were permanently stationed in the kingdom's capital to ensure the safety of Royal Court.

The Mardpetakan regiment who protected the country's domestic rule and order was also considered to be royal armed forces, comprised 15000 combatants. The regiment's commander was also responsible for protecting the queen, the Women's quarters and the safety of most royal treasures. The rest of the treasures were protected by prince of Angeltoun.

Thereby, the royal armed forces were made up of 65000 combatants who made it possible for the king to restrain possible princely actions or rebellions.

The number of combatants in the princely detachments was actually 55 thousand, however it is hard to determine the distribution of those forces into four flanks because the "Zoranamak" example we have is a literary document subjected to a series distortions. It is simply impossible to completely restore it in its original form.

The information regarding the 19400 cavalry or soldiers of the principality of Syunik bears on it the influence of a period when there was a Marzpanate (administrative unit in Sassanid Persia) in Eastern Armenia being under the rule-ship of Sassanid

Persia and Marzpan or leader of the Marzpanate was the prince of Syunik - Vasak Syuni. The armed forces of the Syunik principality included the power of 15 thousand soldiers of Armenian Marzpanate, which coincide with the Mardpetakan regiment numbers.

Among the 13200 soldiers that made up the forces of the Kadmeatsik principality 10000 in reality were the soldiers of the Royal guards regiment also secretly preserved as well as the 3200 combatants from Bdeshkh principality of Nor Shirakani.

The Amatouni principality's name in "Zoranamak" is preserved by the vague writting of Amaskoni who allegedly brought 200 soldiers to the battlefield. An examination shows that the military power of the Amatounis was in reality comprised of 800 to 900 soldiers, of which nearly 400 secretly remained in Vahouni's units or 500 in Bagratouni's units. The princely forces were led by four sparapets or flank commanders. 4,000 soldiers from the royal armed forces occupied the Iberian (Virk) and the so called Albanian kingdoms.

The commander of the Armenian armed forces was formally the king of Great Armenia. However, during war the entire army fought under the command of the sparapet of kingdom or general military leader.

Based on military needs, sometimes a group of soldiers was collected to serve as combatants (lands forces) comprising as a rule from infantrymen.